ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

նոյեմբեր 2025 թվականի N —— Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման N 8 հավելվածի

1) 2-րդ կետից հանել «համապատասխան Ծառայության տարածքային կենտրոնին (այսուհետ՝ տարածքային կենտրոն)» բառերը.

2) 3-րդ կետում «Նպաստի և հրատապ օգնության համար ֆինանսական միջոցների չափերն ըստ տարածքային կենտրոնների, հաշվի առած ընտանիքների անապահովության գնահատման կարգով որոշված աղքատ ընտանիքների թիվը, ընտանիքի» բառերը փոխարինել «Ընտանիքի» բառով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 24-ի «Ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ

օգնության չափերը, 2025 թվականի ընտանեկան նպաստի և սոցիալական նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորը սահմանելու և 2025 թվականին ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության վճարման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափերն ըստ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հաստատելու մասին» N 50-Ն որոշման՝

1) վերնագրում և ամբողջ տեքստում «2025» թիվը փոխարինել «2026» թվով.

2) վերնագրից հանել **«ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԵՐՆ ԸՍՏ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ»** բառերը.

3) 1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Եռամսյակային հրատապ օգնության վճարմանն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համար նախատեսված գումարների ոչ ավելի, քան 3 տոկոսը.».

4) 2-րդ կետը և հավելվածը ճանաչել ուժը կորցրած:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի «Ընտանիքի անապահովության գնահատման կարգը, պայմանները, տվյալների ու դրանք տրամադրող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ցանկը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից տվյալներն ստանալու և տրամադրելու, անապահովության նպաստի և հրատապ օգնության նշանակման, վճարման և ավելի վճարված գումարները վերադարձնելու ժամանակացույցը կազմելու կարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, 2025 թվականի անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմը, անապահովության նպաստի և հրատապ օգնության չափերը, անապահովության նպաստի նվազագույն չափը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն, 2014 թվականի ապրիլի 23-ի N 495-Ն, 2004 թվականի մարտի 4-ի N

318-Ն, 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն, 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն, 2021 թվականի նոյեմբերի 4-ի N 1784-Ն, 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն, 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն, 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1122-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1105-Ն, 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն, 2015 թվականի օգոստոսի 31-ի N 984-Ն, 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1711-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 27-Ն որոշման՝

1) 3-րդ կետի 2-րդ ենթակետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

«2) 2026 թվականի համար անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմը՝ 35.875 դրամ».

2) 23-րդ կետի 2-րդ ենթակետի

ա. հունվարի բառը փոխարինել հուլիսի բառով.

բ. ա պարբերությունում հունվարի բառը փոխարինել հուլիսի բառով.

գ. գ պարբերությունում հունվարի բառը փոխարինել հուլիսի բառով, իսկ փետրվարի բառը՝ օգոստոսի բառով.

3) N 1 հավելվածի՝

ա. 8-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով.

«3) Եթե ընտանիքում աշխատունակ անդամներ չկան (WAA=0), ապա խնամառության գործակիցը՝ DR_i=5, իսկ խնամառության խումբը՝ DRI_i=100: Խնամառության խումբը՝ DRI_i=100 նաև այն դեպքում, երբ խնամառության գործակիցը՝ DR_i >5:».

բ. 37-րդ կետի 1-ին ենթակետը «ուսուցմամբ» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում)» բառերով.

գ. 39-րդ կետի 1-ին ենթակետում «2015» թիվը փոխարինել «2016» թվով.

դ. 39-րդ կետի 2-րդ ենթակետի ա պարբերությունում 4200 թիվը փոխարինել 5250 թվով.

ե. 39-րդ կետի 2-րդ ենթակետի □բ□ և □գ□ պարբերություններում □12000□ թվերը փոխարինել □15000□ թվով։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից։